

212

N 968

1:2

1928 N 730

Ա. Ս. Ֆ. Խ.—Գ. Տ. Խ-ին ԿԻՑ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԻՋՎԱՐ-
ՋԱԿԱՆ ՄԵՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՉԱՓԵՐԻ ԴԱՍԱԽՈՍ-ՊՐՈՊԸԳԱՆ-
ԴԻՍՏՆԵՐԻ—(ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԶԳԱՐՆԱԿԱԶՈՒԹՅԱՆ ՄԵՋ)
ՀԱՄԱՐ



ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐՄԻՋՄԵՏՐԻ

1928

389(07)

Ա-11

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՀԱՓԵՐԻ ԴԱՍԱԽՈՍ-ՊՐՈԴԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ—
(ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ) ՀԱՄԱՐ:

Մետրական սիստեմի մասին տարած պրոպագանդան — գյուղի ազգաբնակչության մեջ — պետք է տարբերվի սովորական պրոպագանդայից, որինակ դպրոցում կամ բանվորների միջև տարվող:

Գյուղացին ենպես շարժուն է, ինչպես ազգաբնակչության մյուս խավերը: Նրա համար դժվար է չափելու հին, սովորած ձևերը փոխարինել նորերով:

Հիմնական դժվարությունն այն է, վոր անհրաժեշտ է հիշել չափերի նոր անունները և գյուղական տնտեսության հետ կապված նոր չափերի դիտողական պատկերացում չկա: Լավ է, յեթե դասախոսը նախապես իմանում է, թե գյուղական առօրյա կյանքին պիտանի գործիքների մի քանի մասերը մետրական չափերով ինչքան են:

Ամենից առաջ անհրաժեշտ է գյուղացի ունկնդիրներին ծանոթացնել մետրական սիստեմի չափերի հետ անբողջապես, այսինքն մետրական չափերին շարունակ դիտողական պատկերացում տալով և համեմատելով հին չափերի հետ:

Խիստ ելական է մետրական սիստեմի տամնորդականությունն յուրացնելը: Այստեղ գործի բացի թվաբանական կողմից, պետք է հիշել, վոր գյուղացուն կարող է դժվար թվալ մետր, կիլոմետր, սանտիմետր և այլ բառերի կազմությունը: Անհրաժեշտ է, վոր լսարանը բոլոր լենթաբաժանումները յուրացնի: Բավական է յեթե յուրացվի տամնյակներով և հարյուրներով հաշիվը և չափերի հետեվյալ անունները՝ մետր, կիլոմետր, գրամ, կիլոգրամ, լիտր, հեկտար: Պետք է փորձել, վոր յուրացնեն հազար բառի տեղ կիլո բառը: Դասախոսության ժամանակ շարունակ պետք է ոգտվել պլակատներին և ցույց տալ հենց այդ չափերը, փորձով ցույց տալ չափելու հասարակ միջոցները: Վորքան կարելի է շատ մարդկանց պետք է ստիպել, վոր իրենց մատներով չափեն դեցիմետր և մետր: Ոգտակար է առաջարկել ունկնդիրներին, վոր իրենց ձեռնափայտերի վրա մետրաչափ նշան անեն: Յեթե կշեռք կա՝ ցույց տալ լիտրի և կիլոգրամի կապը, կիլոգրամի և հին չափերի կապը:

Դասախոսությանը կարելի է մոտավորապես այսպիսի վերնագիր տալ — «Նոր կամ մետրական չափեր», «Ինչպես չափել նոր

չափերով», «Նոր ու հին չափերը», «Նոր չափերը ինչի՞ համար են պետք մեզ»:

Ի հարկե, կարելի չե դասախոսությունը և ուրիշ, համապատասխան անուն տալ:

Դասախոսություն հիմքում պետք է դնել հետևյալ թեզերը.

1. Չափն ինչո՞ւ չէ պես մարդուն. մի քանի հասարակ որինակներ բերել գործնական կյանքից: Ինչ չափերով էլին ոգտվում մեր նախնիները: Այդ չափերի նյութական հիմքը:

2. Ի՞նչ չափեր են գործ ածում Անդրկովկասյան ժողովուրդները: Բերել միայն ամենաժողովրդականացած չափերը: Ի՞նչ չափեր (գլխավոր) էլին գործ ածում Ռուսաստանում մինչև հեղափոխությունը:

3. Ի՞նչ բան է մեծահասակ սիսեմը: Մի քանի խոսքով տալ մեծահասակ սիսեմի պատմությունը:

4. Մեծահասակ հիմնական չափերը. Յերկարություն չափեր (մետր, կիլոմետր, սանտիմետր), տարածություն (քառակուսի մետր, հեկտար), ծավալի (լիտր, խոր. մետր) և ծանրություն (կիլոգրամ, գրամ): Այս չափերի մոտավոր վերածումը ռուսական չափերի:


5. Ի՞նչ է մեծահասակ սիսեմի առավելությունը նրան ռուսական սիսեմի նկատմամբ: Պարզությունը, կանոնավորությունը, տասնորդականությունը, դրամի սիսեմին նմանությունը, միջազգայնությունը:

Դասախոսից իրենից է կախված, թե ինչպես և վոր թեզերը դարձան: Համենայն դեպս դասախոսը պետք է հիշի, վոր իր հիմնական խնդիրն է. — ծանոթացնել լսարանին մետրական սիսեմի ելություն և սկզբունքների հետ և ցույց տալ մետրական չափերի առավելությունը հնի նկատմամբ: Ստորև բերվում է դասախոսություն համառոտ կոնսպեկտ: Իհարկե, սա հնարավոր որինակներից միայն մեկն է:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՊԵԿՏ

1918 թվի սեպտեմբերին Խորհրդային իշխանությունը դեկրետ հրատարակեց՝ մետրական չափերը մտցնելու համար: Մետրական չափերը մտցնելով մենք հրաժարվում ենք հին, մեր սովորական չափերից. — ինչպես վերստ, սաժեն, արշին, փուլ, գրվանքա, դեսիատին, վեդրո. — իսկ մեզ մոտ Հայաստանում ձեռք կը քաշենք տեղական չափերից, հողամեկ, գյազ, թիզ, սոմառ, խալվար, կոթ և այլն: Այժմ բոլորը պետք է ոգտվեն նոր չափերով. — մետր, կիլոգրամ, լիտր և հեկտար:

Ի՞նչը դրդեց մեզ հրաժարվել հարազատ, սովորական չափերից և օտարներից վերցնել նոր, մեծանոթ մետրական չափերը:



60287-67

Այդպիսի փոփոխություն հրամայողական անհրաժեշտությունը և ոգուտը կազմում է ներկա զրույցի նպատակը: Ինչպես կատարելագործված գործիքների և մեքենաների գործադրությունը գործարաններում, գավոդներում և գյուղական տնտեսության մեջ շատ ավելի հեշտացնում է մարդու աշխատանքը, այնպես էլ նոր չափերը պետք է հաշտացնեն նրա աշխատանքը չափելիս ու հաշվելիս, պետք է ավելի հասկանալի ու հարմար դարձնեն բոլորի համար:

Մետրական չափերի առավելությունը, — հին ռուսական չափերի նկատմամբ, ավելի լավ բացատրելու համար, պետք է ավելի մոտիկից նայել թե սրան, թե նրան և համեմատել իրար հետ:

Հին չափեր. — Պետք է մի թուցիկ ակնարկ ձգել հին չափերի վրա: Յերկարության չափեր — վերստ, սաժեն, արշին, վերշոկ, իսկ մեզ մոտ հողամեկ, գյազ, թիզ: Այս չափերով չափում էլին ճանապարհները, կտորները և այլն: Ծանրության չափեր. — փուլ, գրվանքա, մսխալ. իսկ մեզ մոտ բաթման. հոխա, այս չափերով վորոշում էլին մսի, հացի, շաքարի, աղի կշիռը: Հացահատիկների չափեր. — չեովերտ, իսկ մեզ մոտ սոմար, կոթ — վորոնցով չափում էլին ցորենը, գարին, լոբին, սիսեռը: Հեղուկի չափեր. — վեդրո, շիշ, իսկ մեզ մոտ կուժ, թունգի. այս չափերով չափում էլին գինի, ողի և մյուս հեղուկները: Այս տեսակ միայն ռուսական չափերը 20-ից ավելի էլին, իսկ չեթե դրա վրա ավելացնենք մեզ մոտ գյուղերում գործ ածվող չափերը, ապա բոլոր չափերը միասին շատ ավելի կլինին:

Ցույց է տրվում առանձին չափերի միջև չեղած կապը:

Յերկարության չափեր. վերստը = 500 սաժենի, սաժենը՝ 3 արշին, արշինը՝ 16 վերշոկի: Հաշվական չափերը — գյազը 20—21 վերշոկ, թիզը — 4—5 վերշոկ:

Ծանրության չափեր. — դեսիատինը՝ 2400 շ. սաժենի — չերկու որավարի:

Ծանրության չափեր. — փուլը — 40 գրվանքա, գրվանքա — 96 մսխալ: Հայաստանում սոմարը — 18 փուլ, խալվարը 30 փուլ:

Հացահատիկների չափեր. — չեովերտը — 8 չեովերիկ. — Հայաստանի չափերը սոմարը 18 փուլ, կոթը — 1 փուլ, 5 գրվանքա:

Հեղուկների չափեր. — վեդրո, իսկ մեզ մոտ կուժ, թունգի, վոր զանազան զավառներում զանազան չափ ունի:

Կարիք չկա ռուսական բոլոր չափերի վրա կանգ առնել. բավական է միայն մանրամասն ցույց տալ չերկարության և տարածության չափերը, և ունկնդիրների ուշադրությունը դարձնել տեղական — միևնույն անունն ունեցող չափերի զանազան մեծությունների վրա:

Վերոհիշյալ որինակները բերելով, դասախոսը պետք է նկատի, թե ինչքան զանազանակերպ են մեր հին չափերը և ինչպիսի բարդությամբ են կապակցված իրար հետ: Այստեղ կարելի է ցույց տալ, թե ինչքան աշխատանք ու ժամանակ ելին վատնում և ոչ միայն քաղաքացիները, վորոնք ստիպված ելին կյանքի մեջ գործ ունենալ այդ չափերի հետ, այլ նույնիսկ աշակերտները, վորոնք մի հասարակ խնդիր վճռելու համար պետք է հիշելին թե չափի ամեն մի տեսակը քանի անգամ մեծ է մյուսից կամ փոքր և զանազան չափերի մեջ ինչպիսի կապ կա:

Նոր մետրալոմ չափերը.— Պետք է ծանոթացնել լսարանին մետրական չափերի սխտեմի հետ ցուցադրական աղյուսակների և պլակատների միջոցով և գլխավոր չափերը նրանց ցույց տալով: Իբրեւ յերկարության հիմնական չափ, ծառայում է մետրը: Մետր հունարեն բառ է, կնշանակի «չափ»: 1 մետրը հավասար է 22 ու կես վերջուկի, կամ 1 ու կես արշնի, հանած 1 ու կես վերջուկ: Մի կողմ մեկնած ձեռքի մատների ծալից մինչև մյուս ձեռքի ուսը կարելի չէ մի մետր համարել: Յերկարության մյուս չափերը կամ ավելի մեծ կամ ավելի փոքր են մետրից 10, 100, 1000 անգամ:

1000 մետրը մի կիլոմետր է, վորը մի քիչ փոքր է վերստից մետրի մի հարյուրներորդ մասը սանսիմետր է: Յերկարության դրված չափերն են՝ կիլոմետրը, մետրը և սանտիմետրը: Այդ չափերով չափում են ճանապարհի յերկարությունը, գործվածքի կլորը, գերաններ և այլն:

Փոքր տարածությունները վորոշելու համար ծառայում է քառակուսի մետրը, վոր կարելի չէ յերկու քառ. արշնին հավասար համարել:

Հողամասերը չափելու համար գործ է ածվում հատուկ չափ-հեկտար: Սա մի հողամաս է, վորի յերկարությունն ու լայնությունը 100 մետր է: Հեկտարը բաժանվում է 100-ար-ի: Հեկտարը մի քիչ փոքր է դեսյատինից: 11 դեսյատինը հավասար է 12 հեկտարի:

Ծավալը չափելու համար ծառայում է խորանարդ մետրը: 10 խորանարդ մետրը հավասար է 1 խոր. սաժենի:

Խորանարդ մետրերով չափում են քարի, ավազի, աղյուսի, փայտի և այլ շինությունների ծավալը:

Իբրեւ ծանուցյալ հիմնական չափ, ծառայում է գրամը, վոր հավասար է մոտ $\frac{1}{4}$ մսխալի:

Առորյա, գործնական կյանքում գործ է ածվում կիլոգրամը, վոր 1000 անգամ մեծ է գրամից: Կիլոգրամը հավասար է 1000

խոր. սանտիմետր ջրի կշռին, և մի քիչ քիչ է 2 ու կես գրվանքալից: Ավելի ճիշտ 1 կիլոգրամը հավասար է 2 գրվանքա 42 մսխալի: 1000 կիլոգրամը մի տոննա չէ, վոր մի քիչ շատ է 61 փթից:

Այս չափերով չափում են այն ամենը, ինչ վոր մենք չափում ենք փթերով, գրվանքաներով, մսխալներով:

Թե հեղուկների և թե հացահատիկների չափելու համար մետրական սխտեմում մի չափ կա—լիտր, վորը կարելի չէ հավասար համարել 1000 խոր. սանտիմետրի:

Լիտրը հավասար է մոտավորապես $\frac{1}{12}$ վեդրոյի: 1000 լիտրը մի հեկտոլիտր է, վոր 8 վեդրոյից մի քիչ ավելի չէ:

Լիտրերով և հեկտոլիտրերով չափում են գինու, ջրի, կաթի, ալյուրի, հատիկի և ընդհանրապես բոլոր հացահատիկների ու հեղուկ մարմինների ծավալը:

Թվելով բոլոր մետրական չափերը դասախոսը ունենդիրների ուշադրությունը դարձնում է այն բանի վրա, վոր հիմնական չափերն են մետրը, գրամը և լիտրը: Նրանցից կարելի չէ կազմել չափերի մյուս անունները: զրա համար պետք է ավելացնել հետևյալ բառերը.— դեկա—10, հեկտո—100, կիլո—1000, դեցի— $\frac{1}{10}$ մաս և սանտի— $\frac{1}{100}$ մաս:

Յեթե ասում են դեկամետր—դա կնշանակի տասը մետր, հեկտոմետր—հարյուր մետր, կիլոմետր—հազար մետր, դեցիմետր մետրի մի տասններորդ մասը, սանտիմետր—մետրի մեկ հարյուրներորդ մասը:

Ընդամին դասախոսը պետք է ասի, թե կարելի չէ բոլոր անունները չը հիշել: Կարելի չէ հիշել յերկարության հետևյալ չափերը.— մետր, կիլոմետր, սանտիմետր. տարածության չափեր—քառակուսի մետր և հեկտար. ծանուցյալ չափեր—գրամ, կիլոգրամ. հեղուկների չափեր—լիտր, և ծավալի չափեր—խորանարդ մետր:

Դիտելով մետրական չափերի կառուցվածքը, պետք է ցուցադրի նրանց հարաբերության պարզությունը:

Նոր չափերի ամեն մի խոշոր միավորը, յերկարության լինի դա, ծանրության թե ծավալի, իր մեջ պարունակում է մանր չափեր տասը, հարյուր, կամ հազար հատ. այսպիսի կազմությունը հեշտացնում է մետրական չափերով հաշիվներ անելը: Ամեն մի չափը ուղղակի կարելի չէ 10, 100 մասերի բաժանել, ինչպես չերվոնեցը ռուբլիների, 10 կոպեկանոցների, կոպեկների (որինակներ բերել):

Իբրեւ որինակ վճռենք այսպիսի խնդիրներ: Պետք է իմանալ թե 5783 կոպեկը քանի չերվոնեց, ռուբլի և լոպե' է: Մենք գիտենք,

վոր չերվոնեցը 1000 կոպեկ է, իսկ ուռբլին 100 կոպեկ, հետևապես տվյալ գումարը կլինի 5 չերվոնեց, 7 ուռբլի 83 կոպեկ. — ճիշտ այնպես, չեթե տված է 7585 սանտիմետր չիթ, ապա կարելի է միանգամից ասել թե մեր չիթը քանի մետր, քանի սանտիմետր է. չերը հայտնի չէ, վոր 100 սանտիմետրը մի մետր է, ապա մենք կունենանք 75 մետր և 85 սանտիմետր (վճռել մի վոր-ևե խնդիր՝ դրամը կիրգորամ դարձնելու և տասնորդական կշեռքով կշռելու կիրառմամբ):

Իսկ այլ, չեթե ունենք 3753 վերջուկ, ապա դժվար է միանգամից ասել, թե քանի արշին կլինի, վորովհետև 3753-ը պետք է բաժանենք 16-ի, իսկ դա ենքան էլ հեշտ չէ, ինչպես 10-ի բաժանելը:

Համեմատելով հին չափերը մետրական չափերի հետ, դասախոսը պետք է ցույց տա, թե ինչ հսկայական առավելություն ունին նոր չափերը:

1. Մետրական չափերը արագ և առանց հատկապես լարվելու յուրացնվում չեն, վորովհետև կադմված են միատեսակ և մեզ ծանոթ տասնորդական սխտեմով, այն ինչ հին չափերը խճճված են:

2. Մետրական չափերը հեշտ են մնում հիշողություն մեջ, վորովհետև քիչ թվով անուաններ պետք է հիշել, իսկ հին չափերը պահանջում էին 20-ից ավելի զանազան անուաններ հիշել:

3. Չափերի մետրական սխտեմով դործ ունինք թվով շատ ավելի քիչ չափերի հետ (6 գլխավոր անուաններ):

4. Մետրական չափերով, շնորհիվ դրանց պարզություն, ավելի հեշտ է հաշիվներ անել՝ հաշվեշոտքի վրա շատ հեշտ և գումարել և հանել:

5. Հին չափերը մետրականի վերածելիս, առևտրական հարաբերությունների ժամանակ, թյուրիմացությունների համար ավելորդ առիթներ եր առաջ գալիս:

Իր գրույցը վերջացնելով, դասախոսը մատնանշում է, վոր մետրական սխտեմը միջազգային է և ընդունված է աշխարհի բոլոր ժողովուրդների կողմից: Մետրական չափերը մտցնելով մենք ավելի սերտ կերպով ենք միանում մյուս կուլտուրական ժողովուրդների հետ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0236174

55.278